

կեանքով, նոյն սկզբունքներով. հարկաւոր է որ նոքա իրենց միութեան մի ներքին հոգեւոր կապ, մի արտաքին յայտարար նշան ունենան: Այն ընդհանուր կեանքը, որով ապրում է զարերէ, ի վեր հայ ժողովուրդը զանազան աշխարհներում, զանազան պայմանների ներքոյ, ազգային եկեղեցուն առանձնապատուկ կեանքն է. միայն եկեղեցին կարող է այնպիսի ընդհանուր սկզբունքներ տալ, որոնցով պէտք է առաջնորդուի ամէն մի երկրի ինքնաձանաչ հայ. միայն եկեղեցին ունի այնպիսի արտաքին նշաններ և հոգեւոր կապեր, որ նոցա մի միութիւն կազմելը արտապատում են և զգալ տալիս: Այդ բոլոր կապերի հանգոյցը Ս. Իջմիածինն է. Ամենայն Հայոց Աթոռիկոսն է կենդանի ներկայացուցիչը այն նուիրական գաղափարի, որ ի սփիւռս աշխարհի տարածուած բոլոր հայերը մի հոգեւոր միութիւն են կազմում, մի պատմական ժողովուրդ, որից բաժանուող իւրաքանչիւր անհատ կորցնում է գոյութեան իրաւունքը և կեանքի նպատակը՝ ինչպէս մայր բնից կտրուած մի ճիւղ, չոր խռիւների կարգին է անցնում:

Ահա թէ ինչու խորհրդաւոր է և բազմաբովանդակ Առսաւորչեան շարականի ազդարար ձայնը: Աեդրոնի շինութիւնը և կենդանութիւնը անհրաժեշտ է ամբողջի պահպանութեան համար. բայց նա ամայի է և խրթնացած վիճակի մէջ: Հինութիւն պէտք է ոչ արտաքուստ միայն, այլ և ներքուստ. դուցէ արտաքին խրթնութեան գլխաւոր պատճառն էլ ներքին թերութիւններն են. սակայն անհրաժեշտ է, որ մէկը սկսելու համար նախ միւսը լրացուի: Հուսով կըողրի Սայր Աթոռի գոյութեան մի մեծ և նշանաւոր դարաշրջանն ևս. իսկ Սիւրբ Իջման տաճարը զեռ ողբալի անցեալն է յիշեցնում, աւերիչ ժամանակի ամօթարեր հետքերը կրում, նորոգողի ձեռքը ամենից առաջ այդ տեղ պէտք է գործունէութեան նշան ցոյց տայ: Որտեղից պէտք է մեկնուի այդ նորագոյ ձեռքը՝ յայտնի է. բաւական է հարցը

դնել, որ ամէնքը միասին դէպի նոյն անձը, դէպի Ս. Իջմիածնի միաբանութիւնը, դէպի հոգեւոր դասը ցոյց տան: Հինեցէք, ասում ենք մենք. «Ակայք շինեսցուք»՝ կանչում էին մեր հայրերը. հասարակաց գործի համար ամէնքը պէտք է աշխատեն, ամէն Հայ պատուոյ խնդիր պէտք է համարէ մի քար էլ իւր կողմից դնել լուսոյ այն խորանի պատերում, որտեղից լոյս է ծագել Հայաստան աշխարհին: Մենք ամէնքս խոտապահանջ ենք և թերահաւատ, ամէնքս տրամադիր ընդհանուրի պակասութիւնները ուրիշի վերայ ձգելու, ամէն մեղք, ամէն հոգս այն անձերի վերայ բարդելու, որոնք նախախնամութեան անօրէնութեամբ կամ բաղդի բերամար հասարակաց գործի ղեկավար և ներկայացուցիչ են կարգուած. մինչդեռ իսկական ինքնաձանաչութիւնը ճշմարիտ համայնական զգացումը ուրիշ կերպ պէտք է արտայայտուէր: Թող ամէն ոք իւր պարտքը կատարէ, շինէ որքան կարող է և երբեք քանդելու ձգտում ցոյց չտայ, շինէ նոյն իսկ երբ ուրիշների քանդելը տեսնում է և չյուսահատի՝ այն ժամանակ անպատճառ աւերակը շէնին տեղի կտայ և հասարակաց փրկութեան շինուածքը նախկին շքեղութեամբ կկանգնի. այն ժամանակ Ս. Իջմիածինն էլ կշինուի ներքուստ և արտաքուստ:

Կ. Վ.



Կ Ե Ն Դ Ը Ն Ո Ի Թ Ի Ը Ն Ս Ի Ի Ն Ը.

Ս. Իջմիածնի հաստատութեան հիմնաքարը դրուեցաւ այն ժամանակ, երբ փուլ եկաւ հեթանոսութեան հակայական շէնքը: Վաղուց արդէն բուն էին դրել այդ շէնքի մէջ անտարբերութիւնն և գաղափարի շփոթութիւնը, որոնք իբրեւ անմեռ որդեր կրծում և մաշում էին նորա հիմունքը. վաղուց արդէն մոլորութեան և տգիտութեան սեւաթոյր քողով ծածկուած և խորին թմրութեան մէջ ընկղմած էր հայ ժողովուրդը, կրելով հոգեւոր

ստրկութեան լուծը. կենդանի և սթափեցուցիչ մի ձայն էր պէտք, որ հնչէր խաւարի մէջ բնականների ականջին և հրաւէր կարգար նոցա՝ լոյսի և հոգեւոր ազատութեան մէջ մի նոր կեանք վարելու: Այդ ձայնը Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզչութեան հոժեղ ձայնն էր, որ միանգամից ստիպեց իրեն չարաչար հալածող թագաւորին «մեծասաստ իշխանութեամբ» Հայոց աշխարհի ժողովրդին հրաման տալու, որ հնազանդին «Քրիստոսի ծառայութեան ամենահեշտ լծին»:

Այսպիսով ինքն իրեն քայքայուած հեթանոսութիւնը, որ հաստատուած էր անհաւասարութեան և խտրութեան վերայ՝ ընկաւ, խոնարհեցաւ, հողի մոխրի հաւասար եղաւ, և Քրիստոսի փրկարար վարդապետութիւնը, որ ընդունակ էր իւրաքանչիւր հայ անհատին բարձրացնելու մինչև Աստուծոյ որդեգրութեան աստիճանը, կանգնեցաւ հաստատուեցաւ անդրդուելի և հաստարմատ հիմունքների վերայ: Քրիստոնէութեան հանդէս զալով սկիզբն առան Հայաստանում նոր նոր հաստատութիւններ, որոնց կոչումն էր առաջնորդելու հայ ազգին գէպի հոգեւոր փրկութեան ծանաղարհները: Այդ հաստատութիւններից մէկը և զիտաւորն է Հայոց Կաթողիկէ Մայր Եկեղեցին: Ս. Էջմիածինը որ իբրեւ մի նոր կեդրոն կազմեցաւ Վաղարշապատում Ս. Լուսաւորչին երեցած հրաշալի տեսիլքի գաղափարով: Բնական է, որ հեթանոսութեան չարիքներին քաջ ծանօթ մեր սուրբ հայրապետը իւր գործունէութեան զխաւոր նպատակ ընտրէր նոր հաստատութիւններին յատկացնել այնպիսի բնաւորութիւն, որ հակառակ լինէր հեթանոսական ոգուն: Ս. Լուսաւորչին ականբերեւ ին իսկապէս հեթանոս Հայոց հոգեւոր թշուառութեան բուն պատճառները, նա տեսնում էր նոցա մէջ փոփոխականութիւն և կամայականութիւն, գաղափարների շփոթութիւն և մոլորութիւններ, ազիտութիւն և հոգեւոր հեղինակութեան բացակայութիւն՝ չարիքներ, որանք ամէն ժամանակ ընդունակ են եղել քնասելու ամէն մի հասարակութեան և նոցա իս-

կական անկման նշաններն են եղել պատմութեան մէջ:

Աւետարանի ճշմարիտ լուսով Հայոց միաքը լուսաւորելու ժամանակ Ս. Գրիգոր հրաւիրում է իւր ժողովրդին նախ «տաճարս աղօթից միարանութեան» կանգնել, որպէս զի, ասում է, ազատութիւն «ի ծառայութեանցն անձնականութեան գործոցն խաւարին» և բմբռնէք «զփառս լուսեղէնս աստուածութեան»: Եւ մինչ նա այդ խորհրդի մէջ էր, նորան երեւցաւ երկնքից իջած ահաւոր մարդը, որ ձեռին ունէր մեծ ոսկի ուռն, այդ նորանշան գործիքով բախեց նա երկրի երեսին և մի ակնթարթում երկիրն «հարթ հաւասար դաշտաձև յատակեցաւ» վերացան ամէն անջրպետներն և անհարթութիւններն և աչքի առաջ տարածուեցաւ անհուն անսահման մի հարթ երես: Այսպէս «երկիրս երկինք եղաւ», ջնջուեցաւ հեթանոսութեան ստեղծած բազմաստուածութիւնը, խափանուեցաւ խտրութիւնը և միութեան ու հաւասարութեան վերայ հիմնուած փրկութեան գաղափարն այլ ևս սեփականութիւն չէր մէկի կամ միւսի այլ «Որք մի անդամ ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցեալ էք, չիք խտիր ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի, զի ամենեքեան զուք մի էք ի Քրիստոս Յիսուս»: հնչեց Հայոց նոր առաքեալի ձայնը, խառնուելով Պաւլոսի * ձայնի հետ: Եւ այդ միակերպ հարթ հաւասար յատակի վերայ հանդէս եկաւ մի շինուածք, որի նմանը չէր կարողացել երբեք կանգնել մարդկային ճարտարութիւնը: Հայոց հոգեւոր փրկութեան տունն էր այդ որ կանգնած էր չորս սիւների վերայ:

Ս. Լուսաւորչի, որ եկած էր Հայոց խալիսալեալ տունը շինելու և կործանման վտանգից փրկելու մի ամբողջ ազգ, զեղեցիկ ոյլաբանութեամբ բացատրում է իւր ժողովրդին այդ չորս սիւների խորհուրդը. «Ահա, ասում է, ձեր խալիսու շինուածքի համար նաստատուն սիւներ կանգնեցան. այս այն սիւներն

են, որ կրում են ձեր փրկութեան շինուածքի ծանր բեռը: սոքա այն երեք սիւներն են. իսկ չորրորդը՝ կենդանութեան սիւնն է, որ ձեզ բարձրացնում է առ Աստուած:»

Երեք սիւններն ամպեղէն էին՝ կարմիր խարխիւների վերայ հաստատուած և ունէին հըրեղէն խոյակներ: որոնց վերայ կար մի մի լուսեղէն խաչ. դոքա աւելի ցած էին չորրորդ սիւնից. նոցա տեղը Ս. Գրիգոր կանգնեց ս. կոյսերի վկայարանները. առաջինը Վաղարշապատի արեւելեան կողմում և ուր նահատակուեցաւ Ս. Հռիփսիմէն երեսուն երկու ընկերով. երկրորդը՝ հիւսիսային կողմում հնձանի տեղում ուր «մենաւորն սպանաւ» և երրորդն հարաւային կողմում ուր Ս. Գայեանէ մայրապետը նահատակուեցաւ իւր երկու ընկերներով: Այդ վկայարաններն հանդէս եկան, ինչպէս ասում է Ս. Լուսաւորիչ, Հայոց հոգեւոր փրկութեան բռնի ծանրութիւնը կրելու համար: Սոքա ս. կոյսերի նահատակութեան օրինակով ուսուցանում են ամենքին, թէ ի՞նչպէս անդրդուելի հաւատով զօրացած մարդիկ, թէպէտեւ մարմնով տկար էակներ, կարող են յաղթող հանդիսանալ հոգեւոր մարտի մէջ և ժառանգել յաւիտենական փառքի պսակը:

«Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց, Եւ տկար կանայքն վառեցան զինու: Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք, Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր:» երգում է Տէր Կոմիտաս կաթողիկոսն Ի դարում՝ ոգեւորուած ս. Հռիփսիմեաց յաղթանակի սքանչելի պատմութեամբ: Եւ այն ժամանակ, երբ Ս. Լուսաւորիչն ասում է մեզ թէ «այդ վկաները կը լինին ձեզ համար ամուր բերդ՝ աշտարակ հօգը, վերակացուք քաղնխօսութեամբ»: նորա զաղափարները ժառանգող և երգով արծարծող Տէր Կոմիտասը հռչակում է ս. կոյսերին իրրեւ «քարինք սուրբք հիմնեցեալք ի վերայ երկրի» վկայելով, որ նոյն նիւթից է շինուած կաթողիկէ Եկեղեցին:

Իրրեւ թարգման քրիստոնեայ հայ սերունդի ջերմ զգացմունքների Կոմիտաս մերթ

անուանում է Ս. Հռիփսիմեանց հոգեւոր մայր. «Ծնան կուսանք աղգս բաղումս:

Եւ մարք մանկունք զհրապարակս ծերոց»

«Սերթ ոգեւորուում է նոցա անձնագոհութեան զաղափարով:

Կանայք պատուական քաղաքաւ և աղաւ:

Վաճառականք առատք անյայտ մարգարտին:

Եզին զանձինս զբաւականս բազմաց

Եւ եղեն փրկանք անծանօթ աշխարհին»:

Սերթ պատկերացնում է նոցա իրրեւ հոգեւոր առաջնորդ և ուղեցոյց.

«Շինուածք երկրաւոր ի յերկրի հաստատեալք:

Եւ արձանք լուսեղէնք ի յերկինս կանգնեալք:

Ինքեանք ելին և այլոց ցուցին

Զձանապարհս ցանկալի զՎերինն Երուսաղէմի:

Իսկ Հայոց քերթողահայրը Մովսէս Խորենացի սքանչացած Ս. Հռիփսիմեանց նահատակութեան վերայ՝ դրուատում է իրրեւ նոցա «զանձք աստուածութեանն ծաղկեալք ի յերկրի մերում աստեղք լուսատուք, ծաղիկք եկեղեցւոյ, ճանապարհք մեզ եւ դուռն կենաց ի յերկինս: ստութեանն արձանացուցիչք, մոլորութեան լուծումն, չարութեան հալածիչք»:

Այսպէս ուրեմն մեր նախնեաց հայեացքով տեսիլքի երեք սիւնը Ս. Հռիփսիմեանց վկայարանները և առհասարակ վկայական մահը անբաժան յայտարարներ են այն հաստատութեան, որ կրում է իւր վերայ հոգեւոր փրկութեան բեռը: Իսկ փրկութեան զաղափարը սերտ կապուած է կենդանութեան զաղափարի հետ. ով չէ կամենում ապրել, նա և չի կարող զաղափար ունենալ փրկութեան մասին. և ով չի կամենում փրկուել, նա և չունի զաղափար կեանքի կամ կենդանութեան մասին:

Ահա այդ զուգորդութեան մէջ է տեսիլքում երեցած չորրորդ սեան խորհուրդը. Ս. Գրիգոր «կենդանութեան սիւն» անուանեց այն հաստա-

տուժիւնը, որ յիշեալ երեք սիւներից բարձր էր և ունէր միւննոյն մասերը: Այդ սիւնը կանգնեցաւ այն տեղում, ուր դիպաւ ահաւոր մարդու ձեռի մեծ ոսկի ուռը. սիւնն ինքը հրեղէն էր, ունէր բլրաձև ոսկի խարխալ և ամպեղէն խոյակ, որի վերայ փայլում էր լուսեղէն խաչը: Այդ չորրորդ սեան տեղում «ի շինամէջ քաղաքին» Ս. Լուսաւորիչ կանգնեց Հայոց Կաթողիկէ Մայր Եկեղեցին Ս. Էջմիածինը, որն և եղաւ «տաճար Աստուծոյ և տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացեալոց և աթոռ քահանայապետութեան»: Այդ շնաշխարհիկ տան հիմունքն անապական են ինչպէս ոսկին, նա ինքն ունի հրոյ մաքրող և զտիչ ազդեցութիւնը, նա ընդունակ է հանելու բարձրացնելու մեզ մինչև ամպերը և հասցնելու տեղաւորելու յաւիտենական լոյսի պայծառ և անստուեր թագաւորութեան մէջ: Հարթ հաւասար յատակի վերայ հաստատուած Հայոց կենդանութեան այդ չքնաղ ելարանը, իրեն զուխ և առաջնորդ ունենալով քահանայապետութեան աթոռը, որ զօրացած է խաչի լուսով և հովանաւորութեամբ, կոչուած էր հեռու մնալու փոփոխական վիճակի բոլոր չարիքներից, որոնք շատ դիւրութեամբ յառաջ են բերում մտքի մոլորութիւն և բարոյական քայքայում: Արդ ուղղութիւն տալով քրիստոնեայ Հայի մտքին մշտապէս սիրելու հոգեւոր կեանքի մէջ ազնիւը՝ անապականը, վսեմը և լուսաւորը, Հայոց այդ հոգեւոր կեդրոնն ինքը գտնուում է անշարժեցի հաստատուն վէժի վերայ հաւատոյ միաբանութեան անքակտելի կապերով կապուած այն ազգի հետ, որին ծառայելու և առաջնորդելու կոչումն էր ստացած երկնքից:

Ս. Էջմիածնի այդ վսեմ նշանակութիւնը շատ կանուխ ծանաչեցին և գնահատեցին մեր նախնիքը Ս. Լուսաւորչի կենդանի ձայնի ազդեցութեան տակ Հայաստանի զանազան դաւառներից դալիս հասնում էին Վաղարշապատ «ի բացեալ աղբիւրն շնորհացն զիտութեանն Քրիստոսի» անթիւ բազմութիւն զանազան կարգի մարդիկների: Մեծն Տրդատ իւր մեծ

Լուսատուի խորհուրդը լսելով հրամայում է իւր հպատակներին, որ տէրութեան ամէն կողմերից Վաղարշապատ ժողովն մանուկներ ուսման և կրթութեան համար Խոյ եկեղեցու պիտոյքների մատակարարութեան համար յատկացնում է մեծ արքան հողեր և կալուածների եկամուտներ, որոնք նոյն ժողովրդի վերայ էին գործադրուում: Կարծես Սկայազոր թագաւորի այս ջերմ աջակցութիւնն և Մայր Եկեղեցու յարատեւութեանը նախանձախնդիր լինելն է ուղղում պատկերացնել այն աւանդութիւնը, որ պատմում է թէ վկայարանների և Ս. Էջմիածնի շինութեան համար արքան ինքը եօթն օրուայ ծանապարհ դէպի վեր, դէպի Մասիս լեռու գնաց և այնտեղից սարի գլխից այնպիսի մեծամեծ քարեր բերեց, որոնց ամէն մէկը չէր կարող տեղից շարժել մարդիկների մի բազմութիւն. «արդ առեալ սկայազօրն հայկաբար զուրթ արձանան, ի վերայ իւրոց թիկանցն զայն դնէր, ստանձնեալ բերեալ ի վկայարան տաճարն, մէն չորս արձանս սեամս կանգնէր»: Տրդատ արքայի այս բարենախանձ եռանդը չէր կարող չնպաստել Ս. Կաթողիկէի ժողովրդականութեան արագ տարածուելուն: Տրդատի մահից յետոյ դեռ Մասբութների արշաւանքի ժամանակ Ս. Էջմիածինն այնքան ժողովրդականութիւն ունէր, որ Վահան Ամատունին պատերազմի մէջ Աստծու օգնութիւնն հայցելիս աչքը ուղղեց դէպի Ս. Կաթողիկէն և չփախուեցաւ:

Ս. Էջմիածնի ժողովրդականութեան մասին խօսելիս անշուշտ ամեն ոք կրնայ հասկանալ, որ «իրբե կենդանութեան սիւն» այդ սրբալայրի նշանակութեան բարձրանալուն և նսեմանալուն մեծապէս նպաստել է Հայոց հայրապետական աթոռի վիճակը: Արդէն առիթ ունեցած ենք Սրպէլեանի ողբի և (Թովմայ Սեծոփեցու Յիշատակարանի մասին խօսելիս յիշել Ս. Էջմիածնի անցեալը մինչև ԺԵ. դարը: Մենք կարող ենք այսօր էլ Անահիա Նարեկացուն ձայնակցելով ասել, որ Ս. Էջմիածինն ԺԵ. դարից յետոյ ևս Հայոց համար եղել է «ամենայն յամենայնի» և այդ

ոչ միայն նորա պատմական նշանաւոր կոչման պատճառով, այլ և նորա համար որ այդ հաստատութեան անուան հետ կապուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի անունը, մի անուն, որ նուիրական է եղել և է ամէն մի հայ բրիտանէի համար ամէն ժամանակ. հայ ժողովուրդը իւր այդ սքանչելի լուսատուին պատկել ու դարդարել է իւր հրաշալի աւանդութիւնների գեղեցիկ պատկով. չկայ այսօր Հայոց մէջ մի անկիւն, մի փոքրիկ շրջան, ուր չլիշատակուին զանազան զրոյցներ և աւանդութիւններ Ս. Լուսաւորչի մասին. մի տեղ նա լոյս աղբիւր է բղխեցուցել, որ բըժըշկական զօրութիւն ունի, մի տեղ նա առանց լուցկիի կանխել է վառել, մի այլ տեղ նորա ջահն անշիջանելի լոյս է տալիս աշխարհին (Արագածի կանխեղը). աշուղներն երգում են, որ Ս. Լուսաւորիչ բոլոր դեւերին ժողովեց դրեց զնգան, միայն մի կաղ դեւ ազատուեցաւ, այն էլ որովհետեւ ուխտեց ծառայել վանքին իրբն մոխիր թափող. մանկական երգերի մէջ երգում են, որ արեւաբացի ժամանակ Ս. Լուսաւորիչ կանգնած Քրիստոսի կողքին և ոսկի զրիչը ձեռին գրում է մեծին ու պատիկին.

« Լուսացաւ լուսացաւ,

Լոյսն է բարին,

Ծիտն է ծառին,

Հաւն է թառին.

Աշխատաւոր վեր կ'աց բանի.

Երկնքի դռները բաց են.

Ոսկի աթոռը դրած է,

Քրիստոս վրէժն քաղմած է,

Հուսատրիշը կանգնած է,

Ոսկէ գրիշը բռնած է.

Մեծ ու պատիկ գրում էին,

Արդարները խնդում էին,

Մեղաւորները լալիս էին. »

Լուսացաւ լուսացաւ.

Ս. Լուսաւորչի ժողովրդականութեան այս մեծ ոյժը ձգում, միացնում է ամեն կողմի Հայերին Ս. Իջմիածնի հետ. ոչ մի հեռաւորութիւն, ոչ մի քաղաքական տարբերութիւն և ոչ մի այլ

տեսութիւն ընդունակ չէ կտրելու Հայի սիրտը Ս. Իջմիածնից. « Ի վերայ Աջոյն և Իջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալք կան », ասում է ԹԽ. դարու պատմիչն Առաքել Ռաւրիժեցի. Ռարբեր են անցնում, շրջաններ են փոխուում, մարդիկ նոր նոր տեսութիւնների և հաճոյքների են անձնատուր լինում, փոփոխուում է իւր հայեացքներով և գործունէութեամբ հայ եկեղեցականն և աշխարհականը, փոփոխուում են նոցա կրթութեան և ընկերական կեանքի ներքին պայմանները, հանդէս են գալիս նոր նոր առաջարկութիւններ կեանքի բարեփոխութեան, որոնք այսօր ծնում և վաղը մեռնում են, իրենց փոփոխականութեան հետքը թողնելով պատմութեան մէջ, սակայն անփոփոխ են մեզ համար միշտ հաղար վեց հարիւր տարի շարունակ նոյն « կենդանութեան սիւնն » իւր անդրդուելի խարխախ վերայ, նոյն ազատարար և մեզ առ Լստուած ձգող « սուրբ աջը ». նոցանից չեն կարող բաժանել Հային ոչ նենգամիտ վէճերն և իմաստակութիւնները, որ օրէ օր աճում զարգանում են, ոչ մարդկային կրքի անձնաշահ եսականութիւնը հասարակական կեանքի մէջ և ոչ իսկ մասնաւոր խմբակների ցոյցերն ու վկայութիւնները մի որևէ այլ զազափարի անունով այդ սուրբ հաստատութեանը ռոնահարելու. Շատ անգամ և միշտ Հայ ժողովուրդն իւր անօրինակ հաւատարմութիւնն և սէրն առ Ս. Իջմիածինն յայտնել է նոյն իսկ ամենաճանր տաղանդների ժամանակ. շատ անգամ նա յիշել է կարօտով և ջերմաւանդութեամբ իւր նոր Սիոնը և նորա պայծառութեան ու բարեկարգութեան համար զոհել է իւր յետին լուման. Վաղուց չէ, որ մեր ժամանակի Հայ աշուղներն սքանչացած երգում էին ժողովրդի մէջ Ս. Իջմիածնի գովասանքը և հռչակում էին նորա արտաքին և ներքին ձօնութիւնն ու շուքը. Աշուղներին ոգևորում է ուխտաւորների անթիւ բաղմութիւնը, որ ամէն կողմերից գալիս էին Ս. Իջմիածին և « գիւլի լի էին », ոչ սովածին, ոչ ծարաւ. » նոքա զարմացած են

Ս. Իշմիածնի միաբանութեան մեծ թուի վերայ:

«Մեծ ու փոքր հինգ հարիւր միաբան են, Աջով խաչով սիրուն պատարագ կանեն»:

Նոցա սիրար զուարճանում է զեղեցիկ հոգեւոր հանդէսներով և ժամասացութեամբ:

«Տասն երկու կախկոպոս թափօր արաւ:

Տիրացուների ձայնը խելքս տարաւ»:

Ասում է աշուղ Միսկին Բուրջին. նոքա գովում են Հայոց հոգեւոր Տիրոջ Ս. Լուսաւորչի փոխանորդի պատկերը, աթոռը, զգեստը, կատարած արարողութիւնները. «Իշմիածին խիստ գովական զանազան, բացառանում է աշուղ Ղազարը, ծառայ եմ քո սուրբ աթոռին Սրբազան, մի հէնց պայծառ կուփայլի, նման է արեգական, չորս կողմն լաջիվարդ քաշած կու երևայ զարմանազան, աջիդ ունես լալ ու եաղութ ալմաստ թրաշ սուրբ գաւազան, Եփրեմ սուրբ կաթուղիկոսն խիստ գովական զանազան»։ Վերջապէս նոցա զմայլեցնում են Ս. տաճարի ներքին շուքն ու պայծառութիւնը. Միսկին Բուրջին երգում է՝

«Իշմիածին խիստ սիրուն պայծառ տեսի, Երկու հարիւր կանթեղ, յիսուն ջառ տեսի, Դիփի ամէնը ջերկա ջերկա վառ տեսի, Վաթսուն աւել հէնց ոսկի բուրվառ տեսի, Երեք հարիւր ոսկեկապ շուրջառ տեսի, Ոսկի արծաթ պատկեր է ամէն պատը, Արշում է խալիչէքն զառ տեսի»:

Աշուղ Ղազարն երգում է.

«Գիշերահանց քաղցր ձայն կուտայ,

Կու բացուի դրախտի դուռն,

Միջին բաղմայրած է

Լուսաւորչու աջոյ կուռն,

Ոսկէ զայլմով քաշած է

Գիւլխտանի վարդն ու սիւմբիւլն

Ոսկէ մարմար սուրբ սեղանն

Խիստ գովական զանազան»:

Թէպէտեւ այսօր աշուղների այս նկարագրած պայծառութեան միայն աղօտ հետքերն են երևում, որովհետեւ աւելի աչքի են ընկնում Ս. Իշմիածնի տաճարի խամրած նկարները, խոնավութիւնից անշքացած կամար-

ները և նոյն իսկ եկառնուտ անճաշակ զարդերն ու անօթները, սակայն առանց երկմտութեան կարելի է ասել, որ այդ վիճակը ժամանակաւոր է եղել և ժամանակաւոր էլ կըմնայ և ոչինչով չի կարող նսեմացնել Ս. Իշմիածնի իսկական փառքի պայծառութիւնը, քանի որ նորա հիմունքը հաստատուած են ոսկի անապական խարսխի վերայ անշարժ և անդդուելի և նորա անծախելի նիւթերից կազմուած յօրինուած շէնքը պատկուած է մի մեծ լուսաւոր խաչով, որ միշտ տեսանելի կերպով փայլել է և կըփայլի Ս. Լուսաւորչի արժանաժառանգ յաջորդի ճակատին:

Կ. Կ.



ԲԵԹԷԼ ԱՆԿԵԼԱՆՈՅԸ ԲԻԼԵՖԷԼԴԻ ՄՕՏ:

Պատար Բողեւլլինգի գործունէութեան մասին Արարատի այս համարում լոյս տեսնող լուրը ստիպում է ինձ վերականգնել յիշողութեանս մէջ այն տպաւորութիւնները, որ ընդունել եմ մի տարի առաջ նորա հիմնարկած բարեգործական հաստատութիւնները այցելելով և աշխատել մի թեթեւ գաղափար տալ քրիստոնէական ոգու քաղաքակիրթ աշխարհի մէջ ներկայում իսկ կատարած հրաշքների մասին:

Անցեալ ամառ Մարբուրգի համալի գործաստուածաբանութեան ուսուցչապետ Ա. խելիս մի դասախոսութիւն էր կարդում «Ներքին Միսսիոնի»* մասին և իւր ունկնդիրներին գործնական քրիստոնէութեան մի կենդանի օրինակ ներկայացնելու համար ճանապարհորդութիւն յանձն առաւ նոցա հետ դէպի գերմանիոյ ամենանշանաւոր բարեգործական հաստատութիւններից՝ մէկը Բեթէլ անկեւանոցը, Բիլեֆէլդ քաղաքի մօտ Վեստֆալիայում: Ես ևս մէկն էի նորա ուղեկիցներից: Մեզ ամենայն սիրով հիւրընկալեցին այնտեղ և մէկ ու կէս օրուայ մէջ մենք այնքան բան տեսանք, որ կեսնքիս ամենա-

* Կաշխատենց մի ուրիշ անգամ պարզել Թէ ինչ է ներքին Միսսիոնը: